ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2022 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ԱՐԵՆԻ 2022

ՄԱՍ I
Արենի համայնքի ղեկավարի զեկույցը 2022 թվականի Արենի համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Արենի համայնքի զարգացման 2018-2022 թվականների «Հնգամյա զարգացման ծրագրով» նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները՝ Արենի համայնքի 2022 թվականի «Տարեկան աշխատանքային պլանի» առաջնահերթությունները, 2020-21 թվականների ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով քաղաքաշինական հստակ նորմերի սահմանման և պահպանման առաջնահերթությունները՝ իրականացվելու են ծրագրեր, որոնք միտված են լինելու համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, զարգացած ենթակառուցվածքների ձևավորման շարունակականության ապահովմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Համայնքի 2022 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է կայուն ու համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Համայնքում կայուն զարգացման ապահովումը՝ կառավարման արդյունավետության բարձրացման, համայնքապետարանի գործունեության թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու միջոցով:
2. Մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
3. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների, SMS հարցումների և, անհրաժեշտության դեպքում, նաև տեղական հանրաքվեների միջոցով:
4. Նոր տեխնիկական միջոցներով և կոնտեյներներով զինված աղբահանության ծառայության կազմակերպման, նոր աղբավայրերի և աղբի վերամշակման գործարանների ստեղծման համար աջակցության (հողահատկացում, համաֆինանսավորում) ապահովումը:
5. Հասարակական տրանսպորտային ծառայության հիմնումը, որից կօգտվեն համայնքի առավել հեռավոր գյուղերի բնակիչները:
6. Նոր տեխնիկական միջոցներով զինված մեքենատրակտորային պարկի ստեղծումը կոմունալ ծառայությունների բարելավման համար:
7. Երիտասարդական, սպորտային, մշակութային և կրթական տարբեր ծրագրերի միջոցով երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Արենիի զբոսաշրջային ինքնության (բրենդ) ստեղծումը:
9. Գյուղատնտեսական ծրագրերի հետ համագործակցության շարունակականության ապահովումը:
10. Բնապահպանական կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցության շարունակականության ապահովումը:
11. Շրջակա միջավայրի պահպանումն ու վերականգնումը:
12. Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության, ներառականության ապահովումն ու աջակցության տրամադրումը:
13. Մշակութային ոլորտի ենթակառուցվածքների զարգացումը, մշակույթի բոլոր ճյուղերի զարգացումը:
14. Արենի համայնքի և այլ հայաստանյան և արտասահմանյան համայնքների միջև գործնական կապերի ամրապնդումը կամ նոր հարաբերությունների հաստատումը, տարբեր միջազգային ծրագրերին մասնակցության ապահովումը:
15. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացումը (արդիական է հատկապես Արենի բնակավայրում՝ հաշվի առնելով զբոսաշրջության զարգացման տենդենցները), համակարգի անվտանգության և

հուսալիության աստիճանի բարձրացումը:

16. Վթարային շենքերի վերանորոգման ծրագրերի հանդեպ հետևողականության ապահովումը:
17. Մանկական խաղարապարակների և հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը:
18. Նոր բնակարանաշինություն իրականացվող թաղամասերում կոմունալ-ենթակառուցվածքների ապահովումը:
19. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
20. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների վերանորոգման, հիմնանորոգման և/կամ կառուցման աշխատանքների իրականացումը:
21. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

ՄԱՍ II
Բացատրագիր-Հիմնավորում Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծի

Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը: Արենի համայնքի 2022 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

Մուտքային մասով՝ ***835 957 602*** *ՀՀ դրամ, որից.*

- *սեփական եկամուտներ՝* ***146 037 400*** *ՀՀ դրամ*
- *դոտացիա՝* ***339 845 400*** *ՀՀ դրամ*
- *սուբվենցիա՝* ***350 074 802*** *ՀՀ դրամ*

Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ ***87 832 828,7*** *ՀՀ դրամ, որից.*

- *Ֆոնդային մասով՝* ***51 016 704,6*** *ՀՀ դրամ*
- *Վարչական մասով՝* ***36 816 124,1*** *ՀՀ դրամ, որը ամբողջությամբ հատկացվում է ֆոնդային բյուջե*

Հողի օտարումից մուտքեր՝ ***40 000 000*** *ՀՀ դրամ*

Ծախսային մասով՝ ***963 790 430,7*** *ՀՀ դրամ*

1. Եկամուտների կանխատեսում.

Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) մուտքերի ընդհանուր գումարը ծրագրվել է ***835 957 602*** ՀՀ դրամի չափով՝ Արենի համայնքի 2021 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված ***694 303 100*** ՀՀ դրամի դիմաց: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են *146.037.400* ՀՀ դրամ՝ 2021 թվականի նախատեսվածից 5720200 ՀՀ դրամով կամ շուրջ 4 %-ով ավելի: Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում:

Մասնավորապես.

Հարկեր և տուրքեր.

- Գույքահարկը նախագծով նախատեսվել է 56.908.000 ՀՀ դրամ կամ 2021 թվականի համար հաստատված ցուցանիշից 7.685.400 ՀՀ դրամով, կամ շուրջ 15,6 %–ով ավելի,
- Հողի հարկը ծրագրվել է 24.389.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականին ծրագրված ցուցանիշից 2.903.400 ՀՀ դրամով ավելի:
- Տեղական տուրքերի գծով 2022 թվականին ծրագրվել է 3.796.000 ՀՀ դրամ 2021 թվականի համար նախատեսված ցուցանիշից 124.000 ՀՀ դրամով, կամ շուրջ 3.3 %–ով ավելի:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 339.845.400 ՀՀ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ:

Տեղական վճարներ.

- Աղբահանության վճարի գծով նախատեսվել է 5.620.000 ՀՀ դրամ 2021 թ.-ի համար նախատեսված ցուցանիշից 742.000 ՀՀ դրամով պակաս:
- Հողի վարձավճարի գծով նախատեսվել է 14.791.000 ՀՀ դրամ 2021 թ.-ին նախատեսված 15.007.000 ՀՀ դրամի փոխարեն կամ 216.000 ՀՀ դրամով պակաս:
- Խմելու ջրի վճարի գծով նախատեսվել է 10.170.000 ՀՀ դրամ 2021 թ.-ին նախատեսված ցուցանիշից 723.000 ՀՀ դրամով պակաս:
- Ոռոգման ջրի վճարի գծով նախատեսվել է 1.620.000 ՀՀ դրամ 2021 թ.-ին նախատեսված ցուցանիշից 120.000 ՀՀ դրամով ավելի:
- Արոտավարձի գծով նախատեսվել է 1.270.000 ՀՀ դրամ 2021 թ.-ին նախատեսված ցուցանիշից 308.000 ՀՀ դրամով պակաս:
- Ծնողական վճարների գծով նախատեսվել է 6.490.000 ՀՀ դրամ՝ 2021 թ.-ին նախատեսվածից 3.510.000 ՀՀ դրամով պակաս: Նման տարբերությունը

պայմանավորված է համավարակի և ձմեռային ցրտերի հետևանքներով մանկապարտեզների ոչ լիարժեք գործունեությամբ:

- Գույքի վարձավճարի գծով նախատեսվել է 1.140.000 ՀՀ դրամ 2021 թ.-ին նախատեսված 1.130.000 ՀՀ դրամի փոխարեն:

Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը հիմնվում է Արենի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «2021 թվականի համար արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի եվ վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 136 որոշմամբ սահմանված դրույքաչափերի վրա:

2.Ծախսերի կանխատեսում.

Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է *963.790.430,7* ՀՀ դրամի չափով: Նախագծի ծախսային մասը ավել է 2021 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 135.285.449,1 ՀՀ դրամով: Ավելացված ծախսերի բացատրությունն ըստ ծրագրերի ներկայացվում է ստորև:

Ստորև ներկայացվում են Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

2.1 **Ապարատի պահպանում** ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Արենիի համայնքապետարանի (այդ թվում՝ Արենի համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Արենիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 180232000 ՀՀ դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 18.7 %–ը, ինչը 2021 թվականի համապատասխան ցուցանիշից ավել է 3.882.000 ՀՀ դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 134.000.000 ՀՀ դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Արենի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 139 որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2022 թվականին ծրագրվել է 12 ամսվա աշխատավարձի չափով: Կառավարման մարմնի պահպանում ծրագրով նախատեսվում են նաև հետևյալ ծախսերը.

2.1.1 **Էներգետիկ ծառայությունները** ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ցուցանիշները: Մասնավորապես, այս հոդվածով 2022 թվականին նախատեսվել է 20.000.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի 17.000.000 ՀՀ դրամի դիմաց կամ 3.000.000 ՀՀ դրամով ավել:

2.1.2 **Կապի ծառայությունները** ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի և ինտերնետային կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 1.100.000 ՀՀ դրամ, կամ 2021 թ.-ի ցուցանիշից 400.000 ՀՀ դրամով պակաս:

2.1.3 **Ապահովագրական ծախսերը** նախատեսվել են 500.000 ՀՀ դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջներով սահմանված գները և Արենիի համայնքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: Ծրագրված գումարը կրկնում է 2021 թվականին նախատեսված ցուցանիշը:

2.1.4 **Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների** համար նախատեսվել է 100.000 ՀՀ դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացն ապահովելու նպատակով: Ծրագրված գումարը կրկնում է 2021 թվականին նախատեսված ցուցանիշը:

2.1.5 **Տեղեկատվական ծառայությունների** գծով ծախսերը նախատեսվել են 500.000 ՀՀ դրամի չափով՝ 2020 թվականին հաստատված նույն ցուցանիշի չափով: Ծախսը նախատեսված է պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և

ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների, թռուցիկների, բաններների) իրականացման, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման համար:

2.1.6 **Ներկայացուցչական ծախսերի** գծով ծրագրվել է 2022 թվականի տարեկան բյուջեով ծախսեր նախատեսված չեն, քանի որ չկան պայմանավորվածություններ պաշտոնական և այլ պատվիրակությունների ընդունելության:

2.1.7 **Մասնագիտական ծառայությունների գծով** նախատեսվել է 3.000.000 ՀՀ դրամի չափով ծախս՝ հիմնականում հողամասերի, շենքերի շինությունների չափագրման, հակակարկտային կայանների սպասարկման ծառայության համար և ծրագրվել է 2020 թվականի նախատեսվածից 2.000.000 ՀՀ դրամով ավել:

2.1.8 **Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման** գծով ծրագրվել է 1.000.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 500.000 ՀՀ դրամով պակաս, որը ներառում է համայնքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել են համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված և փաստացի շահագործվող գույքի քանակական ցուցանիշները:

2.1.9 **Գրասենյակային նյութեր** հոդվածով ծախսերը ծրագրվել են 1.500.000 ՀՀ դրամ, ինչը ավել է 2021 թվականի հաստատված բյուջեից 600.000 ՀՀ դրամով, և հաշվարկվել են հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը:

2.1.10 **Տրանսպորտային նյութերը** ծրագրվել են 8.000.000 ՀՀ դրամի չափով 2021 թվականի ցուցանիշից 2.000.000 ՀՀ դրամով պակաս և հաշվարկվել են համայնքապետարանի աշխատակազմին, վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով:

2.1.11 **Տրանսպորտային սարքավորումներ** հոդվածով 2022 թվականի տարեկան բյուջեով ծախսեր նախատեսված չեն:

2.1.12 **Կենցաղային նյութերի** գծով ծրագրվել է 1.500.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 1.000.000 ՀՀ դրամով ավելի:

2.1.13 **Հատուկ նպատակային նյութերի** գծով ծրագրվել է 1.000.000 ՀՀ դրամ ծախս՝ նախորդ տարվա ցուցանիշից 1.000.000 ՀՀ դրամով պակաս, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների, ծաղկային կոմպոզիցիաների և այլ պարագաների ձեռք բերում:

2.1.14 **Այլ հարկեր** հոդվածով նախատեսվել է 1.000.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականին նախատեսված ցուցանիշից 400.000 ՀՀ դրամով ավել:

2.1.15 **Պարտադիր վճարների** գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 300.000 ՀՀ դրամ՝ 2020 թվականի բյուջեից 100.000 ՀՀ դրամով ավելի:

2.1.16 **Գործուղում** հոդվածով ծրագրվել է 2.000.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի հաստատված ցուցանիշից 1.800.000 ՀՀ դրամով ավելի: Ծախսի հիմքում ընկած է Արնեի համայնքի ավագանու 23.12.2021 թվականի թիվ 156 թրթռման մեջ նշված պահանջների բավարարումը :

2.1.17 **Համակարգչային ծառայությունների** գծով ծրագրվել է 1.500.000 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից 600.000 ՀՀ դրամով ավելի՝ համայնքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման համար:

2.2 ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ*** ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով նախորդ տարիների ցուցանիշները և կազմակերպված հանրային լսումների արձանագրությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 102.884.932 ՀՀ դրամ, ինչը 2021 թվականի համապատասխան

ցուցանիշից պակաս է 34.334.968 ՀՀ դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում «Արենի» ՀՈԱԿ-ին տրվող դրամաշնորհի ֆոնդը՝ 54.800.000 ՀՀ դրամ կամ ընդհանուր հոդվածով նախատեսված ծախսերի 53,2 %-ը: Ծրագրով նախատեսվում են հետևյալ ծախսերը.

2.2.1 **Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները** ծրագրվել են 11.071.700 ՀՀ դրամի չափով կամ նախորդ տարվա նույն ցուցանիշից 8.248.200 ՀՀ դրամով պակաս: Հոդվածը ներառում է Արենիի համայնքապետարանի և բնակավայրերի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, գույքի վերագնահատման, ակտիվների շրջանառման, վերահսկման և կառավարման ծրագրային ապահովման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցության ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները, ինչպես նաև 2022 թվականին Արենի համայնքի բնակավայրերում նախատեսվող երկրորդային ասֆալտի շերտով գյուղամիջյան փողոցների ճանապարհների վերանորոգումը:

2.2.2 **Մասնագիտական ծառայությունների գծով** նախատեսվել է 5.000.000 ՀՀ դրամի չափով ծախս՝ 2021 թվականի նախատեսվածի չափով:

2.2.3 **Այլ հարկեր** հոդվածով ծախսեր նախատեսված չեն:

2.2.4 **Այլ մեքենաների և սարքավորումների գծով** ծախսեր նախատեսված չեն:

2.3 **Գյուղատնտեսություն** ծրագրով 2022 թվականի բյուջեով նախատեսվել է ծախսել 1.350.000 ՀՀ դրամ, 2021 թվականի նախատեսված ցուցանիշից 500.000 ՀՀ դրամով ավելի: Գումարը ծախսվելու է հետևյալ հոդվածներով.

2.3.1 **Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ** հոդվածով՝ 150.000 ՀՀ դրամ, ինչը կրկնում է 2021 թվականի բյուջեի նույն ցուցանիշը:

2.3.2 **Մասնագիտական ծառայություններ** հոդվածով, ինչպես 2019, 2020 և 2021 թվականներին, այնպես էլ 2022 թվականի տարեկան բյուջեով նախատեսվել է 400.000 ՀՀ դրամ:

2.3.3 **Հատուկ նպատակային նյութերի** գծով նախատեսվում է 800.000 ՀՀ դրամ ծախս, ինչն ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից 500.000 ՀՀ դրամով:

2.4 **Ոռոգում** ծրագրով 2022 թվականի բյուջեով նախատեսվել է ծախսել 30.693.600 ՀՀ դրամ, ինչը ավել է 2021 թվականի նույն ցուցանիշից 23.193.600 ՀՀ դրամով: Գումարի հիմնական մասը՝ 27.193.600 ՀՀ դրամը, կամ 88,5 %-ը ուղղվելու է շենք-շինությունների կառուցում հոդվածին 2021 թվականին իրականացված, սակայն դեռևս չվճարված ջրագծերի կառուցման ծրագրի ծախսերը հատուցման նպատակով, իսկ 3.500.000 ՀՀ դրամը՝ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածին:

2.5 **Ճանապարհների կառուցում և վերանորոգում** ծրագրին նախատեսվել է հատկացնել 77.835.996,7 ՀՀ դրամ՝ 2021 թվականի նույն ցուցանիշից 73.835.996,7 ՀՀ դրամով ավելի: Գումարի հիմնական մասը՝ 70.335.996,7 ՀՀ դրամը, կամ 90,3%-ը ուղղվելու է շենք շինությունների կառուցում հոդվածի 2021 թվականին իրականացված սուբվենցիոն ծրագրերի վճարման նպատակով, գումարի մնացած մասն ուղղվելու է ընթացիկ դրամաշնորհներ հոդվածին:

2.6 **Աղբահանություն** ծրագրին 2021 թվականի տարեկան բյուջեով նախատեսվել է հատկացնել 4.800.000 ՀՀ դրամ:

2.7 **Կեղտաջրերի հեռացում ծրագրով** նախատեսվել է ծախսել 1.600.000 ՀՀ դրամ, 2021թ.-ին նախատեսված նույն ցուցանիշից 400.000 ՀՀ դրամով պակաս: Ողջ գումարը հատկացվելու է ընթացիկ դրամաշնորհներ հոդվածին:

2.8 **Ջրամատակարարում ծրագրով** նախատեսվել է ծախսել 6.940.000 ՀՀ դրամ, 2021թ.-ին նախատեսված 6.800.000 ՀՀ դրամի փոխարեն, կամ 140.000 ՀՀ դրամով ավելի: Գումարը հատկացվելու է հետևյալ հոդվածներին.

2.8.1 **Ընթացիկ դրամաշնորհներ** հոդվածին՝ 6.500.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի նույն ցուցանիշից 1.500.000 ՀՀ դրամով ավելի:

2.8.2 **Շենք շինությունների կառուցում** հոդվածին՝ 440.000 ՀՀ դրամ:

2.9 **Փողոցային լուսավորության համակարգերի սպասարկում** ծրագրով նախատեսվել է ծախսել 1.000.000 ՀՀ դրամ: Ողջ գումարը հատկացվելու է ընթացիկ դրամաշնորհներ հոդվածին:

2.10 **Այլ մշակույթ ծրագրով** նախատեսվել է ծախսել 5.300.000 ՀՀ դրամ, 2021 թ.-ին նախատեսված նույն ցուցանիշից 300.000 ՀՀ դրամով ավելի: Գումարը հատկացվելու է հետևյալ հոդվածներին.

2.10.1 **Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ** հոդվածին՝ 2.000.000 ՀՀ դրամ՝ 2021 թ.-ին նախատեսված նույն ցուցանիշից 1.000.000 ՀՀ դրամով ավելի:

2.10.2 **Կենցաղային և հանրային սնունդ** հոդվածին՝ 1.000.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի նույն ցուցանիշի չափով:

2.10.3 **Հատուկ նպատակային նյութեր** հոդվածին՝ 1.500.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի նույն ցուցանիշից 1.000.000 ՀՀ դրամով պակաս:

2.10.4 **Ընթացիկ դրամաշնորհներ** հոդվածին՝ 800.000 ՀՀ դրամ՝ 2021 թ.-ին նախատեսված նույն ցուցանիշից 300.000 ՀՀ դրամով ավելի:

2.11 **Նախադպրոցական ուսուցում** ծրագրով նախատեսվել է 70.500.000 ՀՀ դրամ 2021 թվականի հաստատված բյուջեից 500.000 ՀՀ դրամով ավելի: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, ինչպես նաև յուրաքանչյուր ՀՈԱԿ–ի պահպանման համար հաշվարկված ամսական միջին ծախսը, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով 2021 թվականին երեխաների փաստացի միջին թիվը՝ որոշակի աճի հնարավորությամբ: Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսված ողջ գումարն ուղղվելու է ընթացիկ դրամաշնորհներ հոդվածին:

2.12 **Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով նախատեսվել է 26.290.000 ՀՀ դրամ 2021 թվականի հաստատված բյուջեի 19.690.000 ՀՀ դրամի դիմաց կամ 6.600.000 ՀՀ դրամով ավել: Արտադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվում են նաև հետևյալ ծախսերը.

2.12.1 **Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ** հոդվածով նախատեսվել է 10.000.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի նույն ցուցանիշից 9.000.000 ՀՀ դրամով ավելի:

2.12.2 **Մասնագիտական ծառայություններ** հոդվածով նախատեսվել է 300.000 ՀՀ դրամ՝ 2021 թվականի նույն ցուցանիշի չափով:

2.12.3 **Հատուկ նպատակային նյութեր** հոդվածով նախատեսվել է 2021 թվականի նույն ցուցանիշի չափով՝ 990.000 ՀՀ դրամ:

2.12.4 **Ընթացիկ դրամաշնորհներ** հոդվածով նախատեսվել է 2021 թվականի նույն ցուցանիշից 2.000.000 ՀՀ դրամ պակաս՝ 15.000.000 ՀՀ դրամ:

2.13 **Այլ հարկեր** հոդվածով ծախսեր նախատեսված չեն:

2.14 **Սոցիալական օգնություն** ծրագրով նախատեսվել է 10.000.000 ՀՀ դրամ 2020 թվականի հաստատված բյուջեի նույն ցուցանիշի չափով:

Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է հետևյալը: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 87.832.828,7 ՀՀ դրամ: Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագիծը համաձայնեցված է Արենի համայնքի «Հնգամյա զարգացման ծրագրի», «Տարեկան աշխատանքային պլանի» հետ և հիմնված է 2021 թվականի ընթացքում Արենի համայնքի բնակավայրերում կատարված հանրային լսումների արձանագրությունների վրա: Հանրային քննարկումների հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է համայնքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջում, փակցվել են բնակավայրերում հայտարարությունների համար նախատեսված, բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղադրված ցուցատախտակներին, հրապարակվել է համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.arpaareni.am):

Այսպիսով, Արենի համայնքի 2022 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. ***եկամուտների գծով՝ 963 790 430,7 ՀՀ դրամ,***
   1.1 որից՝ սեփական եկամուտներ՝ 146 037 400 ՀՀ դրամ

2. ***ծախսերի գծով՝ 963 790 430,7 ՀՀ դրամ,***

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Հ. ՍԱՀԱԿՅԱՆ*